

տութիւնը, քաղցը, իր աչքին առջեւ կատարուած երկպառակութիւնն եւ ապստամբներու բռնած աններելի ընթացքը, իսկ Եւրոպայէն սպասած օգնութեան չոր ու ցամաք խոստում եւ միայն խոստում ըլլալը տեսնելով՝ բոլորովին յուսահատութեան մէջ ինկաւ (1)։ Եւ մտածեց, որ այլ եւս անձնատուր ըլլալէ ուրիշ միջոց չկար իրեն համար, բայց պատուաւոր անձնատուութիւն մը։ Հալէքի կուսակալը պատգամաւորներու միջոցով իմաց տուած էր արդէն, որ եթէ Լեւոն անձնատուր ըլլայ՝ պատրաստ է ապահովութեան թուղթ մը տալ իրեն, որպէս զի ազատ կերպով դուրս ելլէ աշտարակէն եւ իրեններովը միասին երթայ հանգստանայ ո՛ւր որ ուզէ։

Լեւոնի ուզածն ալ այս էր։

Եւ 1375 թ. ապրիլի 16-ին Հայոց վերջին թագաւորն ամիրային հետեւեալ ապահովագիրը գրպանը դրած՝ իր հետեւորդներովը գնաց յանձնուեցաւ Ընդլիթիմուրին, որ մեծ պատիւներով ընդունեց բոլորն ալ (2)։

(1) Պատր, որուն վրայ շատ յոյս ունէր Լեւոն, ա՛յն ատեն միայն շարժեցաւ երբ բանը բանէն անցած էր, եւ այն՝ ուղղակի Հայաստանի համար չէր այլ Ս. Երկրի համար։ 1375 թ. դեկտ. 8-ին Գրիգոր ԺԱ արեւելքի վիճակը պարզելով Եւրոպայի մէջ գտնուած Ասպնջական անունով ծանօթ ասպետներու, հազիւ Հայերու վրայ ալ մի բանի տղ կաւելցներ սա բառերով. « Իսկ Փոքր Հայոց հեմարսիւ քրիստոնէայ քաղաւորութիւնը Սարակինասաց եւ նոյն ինքն թուրքաց միջեւ մնացած ըլլալով, շատ երկար ժամանակներէ ի վեր է որ եւ ոչ ամենատիոք օգնութիւն մը կը գտնէ Արեւմտքի հաւատարմութեան կողմէ. ուսի կամաց կամաց եւ գրեթէ ամբողջովին անհաւատներու ձեռք կիցնայ։ » (Regnumque Armenie minoris, utique christianum positum inter Saracenos et Turcos eosdem, jam longis temporibus auxilium fidelium Occidentalium etiam minimum non presentit; propter quod paulatim et quasi totaliter in manus decidit impiorum.) (Rainaldi, 1375, § 9.)

(2) Լեւոնի անձնատուր եղած ժամանակ Հայոց արեւելի գանձին հարստութիւնն էր՝ « մարգարիտ եւ ակամի պատուական երկուց արհալական քաղցից եւ այլ եւս գոհար՝ ծանրագին եւ ակամակապ գօտի եւ հարմանդ, որոց ամենեւուն գին հասեալ էր . . . հինգ հարիւր հազար դանեկան ոսկոյ » . (Դարդել, եր. 147) . իսկ Կոնիակի մասը նոյն տարին կը բերէր 3,000 Ֆլորին հասար. (Mas Latrie, *L'Ile de Chypre*, եր. 298)։